ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

Անցեալ ամսուն բառակոփն էր ԺԱՄԱՆԱԿ. առջի մասին կրճատած բպռերն են ԺԱՄ որ է ժամանակի մանր բաժանմունքներէն մէկը, ամ որ է տարի՝ մեծ բաժանմունքներէն մէկը, անոր համար ժամանակին պզտի ու մեծ որդիքը կ'ըսուին. դարձեալ գրոց լեզուի մէջ ամանակ բառն ալ ժամանակի նշանակութիւն ունի, անոր համար կ'ըսուի՝ որ գլուխն ալ կորուի ինքը նոյն բանը կը մնայ. և որովհետև ժամը փոքր մասն է և ամը մեծ՝ ուստի որչափ պզտիկնայ սա բառս՝ ըլլալով ամ, ուսկից աւելի պակաս գրով բառ չկրնար ձևանալ, այնչափ կը մեծնայ՝ այսինքն քան զժամը ու ժամանակը: Մեծ որդւոյն մեռնիլն ու յառնելը հին տարւոյն լրմընալն ու նոր տարւոյն սկսիլն է: Բառակոփին երկրորդ մասը Անակայ պատմութիւնն ըլլալը ամենուն յայտնի է:

Ամուռ. Կրօնքն առաջնորդ եղած է ամենէն աւելի խմաստուն ու գերազանց խելքերու և հանճարներու. Պաքոն Վերուլամիոս կը յարգէ զանիկայ ինչպէս կնիք խմաստութեան. Կարդեսիոս իրեն խորին մտածմանցը նպատակ կը համարէր զանիկայ. Գալիլէոս իրեն վարդապետութեանցը սկիզբն ու հեղինակ կանուանէ. Մալպրանշ հայելի իրաւանց կը սեպէ զանիկայ. Նիւտոն կ'ըսէ թէ հիմն է տիեզերաց շարժմանը. Լէյպնից բանալի բնազանցական ճշմարտութեանց և մեկնիչ գժուարիմացութեան մարդկային մտաց՝ կ'անուանէ. Կրոտիոս կը կոչէ զանի միակ սկիզբն ընդհանրական արդարութեան. Պոսիւէ հոգի և իմացականութիւն պատմութեան կը գնէ. իսկ Քանտեան կը համարի զանի գերագոյն աղբիւր մտաւորական գեղեցկութեան: Արդ կրօնքն որ այսչափ գերագոյն մտաց պատկառանքովը փառաւորուած է, կրնանք մենք անպատկառ զանիկայ արհամարհել, և քանի մը կոյր ու անմիտ մարդկանց լերբ ու անմիտ անկրօնութեանն հետևիլ:

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ. Ցուցուած է որ երկու զանազան թուոց մէջ երկուքին մէկը կամ իրենց գումարը, կամ իրենց տարբերութիւնը՝ 3 է կամ 3ով բաժանելի թիւ մը. զոր օրինակ ա Դնենք 3 և 8, առջի թիւը 3 է. դնենք 1 և 2, գումարնին 3 է. դնենք 4 և 7, տարբերութիւնին 3 է: — բ Դնենք 17 և 26, տարբերութիւնը 9 է որ կը բաժնուի 3ի վրայ. — 9 և 12, գումարնին 21 է որ կը բաժնուի 3ի վրայ. — 35 և 40, գումարնին 75 է որ կը բաժնուի 3ի վրայ. — 33 և 48, գումարնին 81 է որ կը բաժնուի 3ի վրայ:

Բ. Ան թիւերն որ 3ով կրնան բաժնուիլ թէ միանակ եղեր են և թէ մէկտեղ գումարած, կամ թէ մէկմէկու հետ բազմապատկած, իրենց գումարը կամ արտադրեալն ալ կրնայ 3ով բաժնուիլ. զոր օրինակ ա 42 կը բաժնուի 3ի վրայ, ասոնց թիւերը 4 և 2 կ'ընեն 6, որ կը բաժնուի 3ի վրայ: — բ 15 և 21, մէկտեղ կ'ըլլան 36, և երկու թուոց թուանշանները մէկտեղ կ'ըլլան 9, որ 3ի վրայ կը բաժնուի: — գ 6 և 12 կ'ընէ 18 որ 3ի վրայ կը բաժնուի. երկուքին ալ թուանշանները կ'ըլլան 9 որ կը բաժնուի 3ի վրայ. նմանապէս 12 բազմապատկելով 6ով կ'ըլլայ 72 որ կը բաժնուի 3ի վրայ: Վերջապէս ան ամէն թիւերն որոնց որ թուանշաններն մէկտեղ կը բաժնուին 3ի վրայ, իրենց ալ զորութիւնը կամ ցրցուցած նշանակութիւնը կը բաժնուի 3ի վրայ և 9ի վրայ. զոր օրինակ 1845 ՃԻՀԴ կը բաժնուի 3ի վրայ և կ'ըլլայ 615. 1845 կը բաժնուի նաև 9ի վրայ և կ'ըլլայ 205. իսկ որոնց որ թուանշանները մէկտեղ 3ի վրայ բաժնուելէն զատ՝ վերջի երկու թուանշաններն ալ ջուխտ թիւ որ ըլլան՝ 6ի վրայ ալ կը բաժնուին. զոր օրինակ 4518: 6=753:

Տնտեսական. Մլուկները 1 ջարդելու համար առքիչ մը զուտ օղի, նոյնչափ ալ բևեկնի եղ 2 կամ ոգիք մէջն ալ խառնէ կէս ունկի ծեծած քարփուր 3 ու վրձինով կամ սպունգով մը մլուկ եղած տեղերը օծէ: — Խուցիդ լաթեղէնները դուրս հանելէն ետև, պատուհաններն ու դռները լաւ մը գոցէ, ու կրակին վրայ երկրթէ սան մը դիր 2 ունկի ծիսխոտով ու 3 ունկի ծեծած ծծմբով, վրան ալ ծածկէ որ բոցը չբարձրանայ, ձգէ ու դուրս ելլիր. 24 կամ 48 ժամէն ետև պատուհաններն ու դռները բաց որ օդը փոխուի. երկայն ատեն այն խցին մէջ մլուկները չեն երևնար: — Լաւ մը խուցդ գոցելէն ետև հոգէ ամանով եռացած ջուր դիր մէջ տեղը, վրան ալ հինկ վեց կաթիլ ծծմբային թթու լեցուր, ու շուտ մը դուրս ելլիր ու դուռը փակէ. ժամ մը չանցնիր որ մլուկները կը ջարդուին: — Աս յետագայ բաղադրութիւնս ալ թէպէտ շատ զօրաւոր է բայց խոհեմութեամբ գործածելու է վասն զի մէջը թունաւոր նիւթ կայ: Խցիդ պատուհանները գոցէ ու կրակարանին վրայ ապակիէ անօթով մը բորակային թթուի մէջ անդիկ լուծէ ու դուրս ելլիր. երկու նիւթն ալ ցնդելով մլուկները կը ջարդուին. աս կերպը կրնայ կահերուն վնաս տալ, անոր համար լաւ կ'ըլլայ որ լաթեղէն զարդերը առաջուց դուրս հանես, վերջն ալ պէտք չէ մէկէն բնակիլ, հապա օր մը բաց թողուլ որ հովահրի:

Տօմարական. Աս տարուան փետրուար ամսուս մէջ (ըստ նոր տօմարի) հինկ կիրակի պիտի ունենանք 29 օրուան մէջ. աս կարգդ դուրս հանդիպումնքը պիտի պատահի մէյմ՝ ալ 28 տարիէն ետև այսինքն 1880ին: Անկէց ետև մէյմ՝ ալ 40 տարիէն այսինքն 1920ին, որովհետև որ 1900ին գարագլուխ ըլլալով նահանջ օր պիտի չունենանք:

1 Տ՛. Թարկոս պիսի: 3 Տ՛. Քէոֆիրի:
2 Տ՛. Թիրէմենին եղը: